գերեզմանը տաճարի պէս պատուել կուտաս ։ Արդ դու, որ ոչ միայն քու իմաստուններդ կը սիրես, այլ և զիմաստունները պատուողն ալ չես արհամարհեր, ընդունէ՛ թէ որ բոլորովին անարժան չես սեպեր՝ աս ետքի տողերս ալ, որ քու բարեկամիդ արժանին նայելով՝ գրեր է անոր զարմացողներէն մէկը ։

Ընդ սեմականդ անմահութեան ոչ ընդ մահու յառեալ արժան
Մըխրանայ տուն Հայկազին, նախանձարկու քև հանուրց դոլ.
Անուանեալ խուժիցըն հէնք՝ յինքեանց դատող սարսեն յաջողդ
Օ որ պաշտէն սիրահամբոյր հսկող հանճար յաներևոյթս,
Ընդ ըղձանըն զիսկական աթենախաւըն դիտելով
Ի յանհասից շնորհաց պըճնեալ զիմաստնարանդ երկնապարիկ.
Ում թէ բնութիւն մռացամիտ ժխտեաց անդրի արժանւոյդ,
Դարք կայցեն կամարակապ և ժամանակն իցէ տաճար ։

Հ. Ղ. Մ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍԱՐԿԱՒԱԳԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԱՍԱՑԵԱԼ ԲԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Ի ՊԱՏՃԱՌՍ ԶԲՕՍԱՆԱՑ

ԱՌ ՁԱԳՆ ՈՐ ԶԱՂՕԹԱՆՈՑԱՒ ՆՈՐԱ ՃՌՈՒԵՂԷՐ ՔԱՂՑՐԱՁԱՅՆ

ՈՐ ԿՈՉԻ ՍԱՐԻԿ։

Արթուն և զուարթուն թըռչուն հըսկող և բարբառող,
Կանչող և կարկաչող, ճռաճուող ձայնող պաշտօնասէր,
Արդ եկ ինձ մերձ 'ի գովութիւն զի արարչին փառք մեծացին,
Մեծն 'ի փոքուդ քարոզեսցի և քաջարուեստըն ծանիցի ։
Ազգաւ թըռչուն մեզ թևաւոր 'ի ջուրց բըղխեալ ընդ համասեռս,
Բայց տեսակաւ դու անջատեալ ընդ փանաքիս և աններչանս.
Ի նոյնսըդ յամրաշարժ և գեղով անվայելուչ,
Ըստ հասակի յոյժ անարգելի և յոգայինս վերջադասեալ.
Աղքատ և անհամբար ընդ այլսն և դու ես կոչեցեալ,
Անհոգ և անարար, որպէս ուսաք 'ի Քրիստոսէ.
Այլ ըստ անձին ես քաջավարժ բոլոր մասամբ անձնականաւդ,
Խոհեմ և ողջախոհ, իրաւացի և քաջասիրտ.
Իսկ արուեստիւ դու երաժիշտ ամենահնար անվարդապետ,
Ինքնաբաւ ինքնուսումըն վայրաբնակ և անքաղաք,
Անմերձ և մօտաւոր, ուրախարար լըսասիրաց,
Քաղցրաձայն դաշնակաւոր՝ որպէս կարծեմ ըստ արուեստին,
Սաստկախօս և հարթավանկ, խանդաղատող և ողբերգակ,
Հրամայող և ողոքող, ըզխրատականըս ներադրող,
Սպառնացող և հեզախօս, գըգուող կոչող և հրաժարող,
Կականող և ձայնարկու, յոյժ խընդացող և զուարճացեալ ։
Արդ գիշերըն քեզ 'ի տիւ, և խաւարն որպէս ըզլոյս,
Տըքնասէր մըշտապաշտօն ըստ անմարմնոցըն սարասի,
Յօժարախորժ յաշխատութիւն և վաստակօքըն հանգուցեալ,
Պիտոյիւք սըղագունիւք իբր անճաշակ մարմին լըցեալ,

Լուսագօքրն կերակրեալ որպէս ունող զայն զօրութիւն,
Պարապեալ միայն երգոց ընդ գերակայսրն կենդանիս։
Նգիր օրէնք ես միանձանց և կրշտամբիչ հեղգացելոց
Ոչ միով այլ յոլովիւք, որպէս տեսաք 'ի նախերգեալսդ։
Ո՛վ պարող դու անձանձիր և կաքաւիչ յոքնանրւագ,
Ննջշան երևելի, և անպատիւ փառաւորեալ.
Քանչելի 'ի քեզ խորհուրդ որոց ' ընտրեաց տէր յաշխարհէ.
Այց չառեր դու զօրութիւն որով դիւրաւ խօսին լեզուք.
Ոչ մրտեր 'ի վերնատունն ընդ հրաւիրեալսրն յաւետիսն.
Դրդ ուստի՞ ի՞ցէ քեզ խօսել յայլալեզուս և յընտանիս.
Այլ ուստ ինձ զի ծանեայց կիսակատար իմաստակիս.
Մի՛ պատճառեր զանբանութիւն դու յօդաձայնրդ վերծանող.
Նյօդ ձայնիւ վարդապետեա, և ըստացիր զիս աշակերտ.
Օ՛ի հատուցից քեզ փոխարէն ընդ ուսելոյ իմաստութեանն,
Դրձակեալ քեզ ներբողեան Թողից ըզկնի անապական,
Դ՚ռ հանդերձեալսրն ժամանակ անջընջելի քաջայարմար,
Յորդորականս և վայելուչս, յորմէ օգտին իմաստնացեալք։

Զգէն պատասխանէ։

Ասա լուայ և գիտացի զոր իմացար և խօսեցար.
Դյժմ հրամայես և մեզ պատմել 'ստ որում ունիս 'ի քեզ իմաստս,
Ոստ այսպիսում յեղանակի որ ասել գայ 'ի կարգի,
Նխոտոր և անսայթաք, Թէպէտ անբաւ է զոր Թողում։
Ոչ մեղայ ոչ մահացայ, ոչ կորուսի զոր ընկալայ,
Օաւանդրն պահեցի և տուգանաց ոչ ըզգացայ.
Ընչինեցի ես աշտարակ զի յոգնակի դարձեալ մեղայց,
Կամ ընկալայց ըզպատուհաս նրմանապէս բանաւորացդ
Միոյ շրթան և բարբառոյ բազմատեսակ բաժանելոյ,
Ոչչար կամաց միութիւն այնու 'ի բաց անջատելոյ.
Օ՛ի և բազմացն է միութիւն նրմանապէս պարսաւելի,
Փոխադարձիչ յոչ բընաւոր ըստ մեղանացրն շահեցման։
Դրդ կացի 'ի բնականին որոյ պարգևն է յայտնութիւն
Որ 'ի լրման ժամանակաց ընծայեցաւ փոքու հօտին,
Ընձեռեցաւ նոցա բազում զի կոչեսցին բազումքն 'ի մին.
Օ՝որ միովքն կորուսին՝ հակառակաւրն շահեսցին.
Որպէս և այլ տրնտեսականքն որով կեցաք 'ի մահուանէ
Ոչմեզ նորոգեցին ընդդիմակօք սրխալանացն։

Դրատասդասդանէ վարդապետն ղդիմադրութիւնն յԶգէնն
և առնու ոճ ամբաստանութեան։

Օ՝ԱՏՍ ասայ պատճառ բազմանրւագ եղանակացն
Ոչչունրն քաղցրախօս 'ի հարցանելրն մեր ընկա.
Թէպէտ բազմացրն միութիւն, Թէպէտ միոյն տարբերութիւն,
Ընականին 'ի բաց դրութիւն վասրն սղալման առ վեհագոյնն
Նրմանապէս են պատուհաս որպէս գիտեմք 'ի բնութենէ,
Ասայ ես դեղերմամբ ևս 'ի բազմաց ամաց հետէ.

1 Յօրինակին որով։ Զառաքելոյն ակնարկէ։

Զի տըքնեցայ զօր ամենայն և ըզգիշերըն բովանդակ
Ա՛ իմաստըս ցանգութեամբ, նա և սիրոմն որ առ համձար :
Զայս ասաց և հաստատեաց որպէս կընիք իւրոցն իրաց.
Յանդիմանեաց ըզմեզ ուղիղ, և ինքն օդովըն սըլացաւ,
Ի բարձրութիւն ոստոյն նըստաւ ըզհայրենին բարբառելով.
Աղաղակաւ զիս ձանձրացոյց, և չօգտեցայ 'ի խոկմանէն.
Տըրտմեցայ և զուարձացայ 'ի մէջ երկուցըն պաշարեալ.
Յանուանէ զնա կոչեցի և խօսեցայ դատաստանաւ,
Հարցի և քըննեցի և պարտեցայ 'ի յաղթութեանն :
Ասացի ընդ անմեղին որ ձարտարէր առ իս բանիւ,
Գաղտնեօք ներհակ ձայնիւ ջանայր յաղթել ինձ 'ի մարտին.
Ասեմ, ընդէ՞ր դու զիս նեղես ըզխորհեցողս իմաստութեան.
Ուշի մըտացս իմոց յաղթես անդըլակի ժուժողութեամբդ.
Խորհըրդոցս այլայլութեամբ ըզդեգերանս անշահ առնես,
Ըզհայեցուածըս բաժանես, լընուս զականջըս խռովութեամբ.
Ընդ որս և միտքս արտաքերին ոչ յամելով առ իս ինքեան,
Վազեն արտաքս իբրև ընդ ծերպս և բնաւ արգել ոչ ունելով:
Ի գիւտըն քո փութամ և ըզգըրեալըն մոռանամ,
Ի շահաւէտ ձառից զըրկիմ առ 'ի շահել զոչ ձահելիդ,
Յանապատի աստ գամ նըստիմ զի օգտեցայց հանդարտութեամբ,
Ասացից և իմացայց զի մի՛ եղեց ընդվայրատանջ,
Աշխատեցայց անշահաբար ունայնատուր խմաստութեամբ'.
Բազմադիմի փխասուն ձըգմամբ որ հանդիպի 'ի մէջ մարդկան
Դու նեղես զիս անձանձիր որպէս գըտեալ յինէն վընաս,
Դատախազես աղաղակաւ որպէս օրէն է զըրկելոց,
Ատենաբար առ դատաւորն սաստիկ զինէն ամբաստանես.
Կամ թէ կարծես զիս թըշնամի օտարապէս քեզ մարտուցեալ:
Զորմէ սիրեմըդ տըրտընջեմ, զի աստ կրեցի զոր ասացիդ.
Նաև այսու ես աշխատիմ զի մուրհակաւ ամբաստանեմ,
Յոլով ժամըս պարապեալ 'ի գրով ձեռին ըզքէն տըրտունջ.
Ըզկարևորըսըն մոռացեալ որով ապրէ անձն և մարմին,
Ըզմերձն առ նոյնըս խափանեալ որով լինի իմաստնանալ,
Զուգել մեծաց և անուանեաց, նաև վերին իսկ զօրութեանցն :
Արդ ես ո՛չ երբէք ծանեայ զիս վարեցեալ յորս ասացիդ,
Բայց աւելեօք ամբաստանեմ զի ծանիցի ոտխութիւնն,
Որպէս սովոր են զայս առնել որ յատենի են դասեցեալք',
Զի բանքըն զօրացին և մարթասցեն առնուլ օձան :

Սան ըրշէէին[3] որ Նահանջն 'ի վերայ Վանեցւոց :

ԱՅԼ և զայժմուս իսկ պատահումն ոչ լըռեցից արտաքերել.
Ըզնախահօրըն փոխազգեստն որ յետ յանցմանն ընձեռեցաւ
Ապացոյց մեռելութեանն և գուշակիչ ունակութեան,
Ըզվերարկուս ինձ համունակ զայս արարեր դու անպիտան,
Զի 'ի քո բանսդ անդ ըզբազմամբ ներկեաւ սաստիկ այս մելանաւ :
Բայց ասա ինձ գիտակաւ զոր հարցանեմըս խորհըրդիւ.
Զի թէպէտ ըզտոպխազն դատեցելոյն չապաքանել,

1 Ցորենակին խանգարեալ է բառդ :
2 Գուցէ տոպէշէսյս :
3 Լեշկամաշկ, վերարկու մաշկեայ :

Թէ ազգակից ես սոխակի՝ ասա դու ինչ դիմադրութեամբ[1],
Ընդէ՞ր չունիս դու քեզ կայան յանապատի որպէս նոքայն.
Երաժիշտք են և նոքա, բայց ցանկացան անապատի.
Դաշնականացըն նուագօք ըղձացավայրսըն զարդարեն.
Սակաւուց եղև լսել[2] ըղձարեձայն երգատրութիւնսն.
Գովեցան և գրգռեցան յորոց լուան ըղքաղցրավանգսն:
Ամփիոն այր Թեբացի և Արիոն Միթեմնացի,
Որփեւս Թրակացի[3], այս երաժիշտք են մեծագովք.
Այլ նըւաղեալ են առ նոքօք որք բնականաւն են պաճուճեալք,
Զի գործի այսր արուեստի նոքա չունին 'ի բնութենէ:
Մի և դու ես յայնցանէ զորոց լուար ըզպատմութիւնն,
Համարուեստ և անուանի որպէս արդիւնքըն վըկայեն.
Բայց միով ես պակասեալ, զի չսիրեցեր զընդ նոսա կեալ
Այլ չարարեր անդ քեզ դադարս ուր և նոքա են տաւաղեալ.
Աստ գաս նըստիս մերձ առ ինև իբր արուեստիւ ինձ յանգակից,
Բազմաղեաւ երգարանաւ եղանակես և կաքաւես.
Համերական տաղիցըն չափ քեւ[4] ծանուցեալ լինի բազմաց
Յոտանաւոր և ցուցական ըստ քերթողացըն տեսակի,
Կամ թէ ևս աւելագոյն, որպէս թըւի ինձ գիտողիս.
Զի վարժումն և կրթութիւն ոչ ժամանէ առ բընութիւն:

Հաւն պատասխանէ ամէնաստանաբար առ վարդապետն:

ԴԱՐՁԱՒ պատասխանեաց բոլոր բանիցս ասացելոց,
Երագագոյն քան զոր լըւաւն ապաբանեաց հագներգութեամբ.
Ծանոյց ինձ հաւաստեաւ կորովակի արտադրութեամբ
Զիմաստըս խորհըրդոց մեզ ընդ միմեանըս բնակութեան.
Ասէ, Զես արդարախօս ամբաստանողդ ըզմէնջ բանիւք.
Տարապարտ տըրտընջեցեր յորըս ես ոչ եմ պարտաւոր.
Լուր և դու իմոց բանից, արդարախօս դատեցելոյս:
Իմ և ձեր է այս աշխարհ յորում և դուք էք պանդըխտեալ,
Ընտանի և սեպհական ըստ որում էրըն բնակութիւն,
Ի յարարչէն մեզ աւանդեալ տեղի ուսման և աճեցման
Յարմարական մեզ առ 'ի պէտս որպէս ունիմք ըզկազմութիւն,
Դուք ըզձերըն տուժեցայք վասըն յանցման առ արարչին,
Աստուածութեանըն ցանկացայք, զոր ունէիք՝ զայն կորուսէք.
Յերկինս ելանելով մերձ առ դըժոխըս սողացէք,
Ձեռնարկելով առ ձոխանալ՝ աղքատացայք և տնանկացայք,
Առ գերակայսն ամբառնալով կործանեցայք 'ի ստորինս վայրս,
Առ մեծ փառըս դիմեցմամբ վերջոտնեցայք աստ առ մեզ.
Զարարչին բան մոռացայք, և բանսարկուին հաւանեցայք,

1 Յօրին. խանգարեալ է:

2 Յօրին. լսող:

3 Ամփիոն երաժիշտ յոյն՝ արքայ Թեբայեցւոց, որ և պարսպեաց զԹեբէ. կամ որպէս քերթողքն առասպելեն, քնար յԱպողոնէ ընկալեալ, և նորին նուագացն քաղցրութեամբ զքարինս շարժեալ 'ի շարս և 'ի զետեղումն պարսպացն ընթացուցանէր: — Արիոն քերթող և երաժիշտ 'ի Մեթիմնա քաղաքէ Լեսբոսի՝ Թողեալ ասի քնարաւն դլփին մի, որ ապա ընդ աստեղատունս դասեցաւ: — Իսկ Որփեւս երգիչ կամ քերթող էր անուանի, յորոյ 'ի լուր ձայնին գազանք ամենեքին ընթանային, և կողերք ծառոց ծափ զծափի հարկանէին:

4 Յօրին. Ն:

Օրինօք [1] անօրինեալք և անիծիւք դատապարտեալք,
Յանմեղութեան անդ ոչ կացեալք, անթիւ չարեաց եղէք պահակք :
Զարդարութիւնըն կորուսեալք՝ յոքունց մեղաց եղէք գըտիչք,
Տեարքըդ ծառայք ախտից գըտայք հաւանութեամբ մարդասպանին :
Ծառայքս 'ի ձէնջ ապըստամբեալ որպէս և դուք 'ի տեառնէն,
Փուշ և տատասկ ձեզ փոխարէն զի չսիրեցէք ըզփափկութիւնն ·
Մահու վըճիռ ձեզ հատուցումն զի չախորժէք ըզկեանս անեղծ ·
Թըշնամութիւն առ սիրեցեալն ըստամբակացդ առ սիրուն հայրն ·
Անդրադարձիլ ձեզ առ երկիրն ապականիչքըդ պատկերին,
Կերակուր ձեզ 'ի վայրէ որպէս և մեզ երկրակեցացս,
Անասնականըս պարենիկ չիմացողացդ ըզվայելուչն,
Ընդ մեզ կենակցութիւն ձեզ չընտրողացըդ առ Աստուածն,
Առ ծառայս անզուգութիւն՝ զանզուգութիւն մեծարողացդ :
Բայց և անմեղքըս վնասեցաք վասն ձերոյդ ժըպրհութեան ·
Ի փառըս ձեր մեք գոյացեալք և վասըն ձեր ապականեալք,
Ոչ միայն մահուամբ, այլ և սաստիկ գանարբութեամբ,
Եւ ընկալողացդ ըզտեառըն կամըս չընկալողքս ըզգիտութիւն,
Ընդ ազատ կամաց ունողըդ հետեւեալքս ըստ բընութեան,
Ընդ մըտաւորսդ և բանաւորս անբանութեամբ պարաւանդեալքս :
Արդ մեզ և ձեզ առ հասարակ եղէք գըտիչք կորըստեան,
Զի և ընդ մեր իսկ տուգանաց պարտիք համար տալ արարչին :
Եւ աղէտք վըշտագինք պարապատեն ըզմեզ յերկրի,
Խորշակք և ձըմերունք և պիտոյից պակասութիւնք,
Ցաւք և խօթութիւնք և տարաժամ մահու արկուածք,
Որք յաւելան վասըն մեղաց զի տանջեսցեն զըստահակողսն ·
Յորս աւելի մեք աշխատիմք՝ ոչ ունելով յարկս և քաղաքս,
Ոչ համբարըս մըթերեալս 'ի լիութիւն հարկաւորացն,
Ոչ դեղս և ոչ բըժիշկս որով ցաւոց ախտ դադարէ,
Ոչ կակուղ ինչ կերակրիկ մեզ 'ի սփոփանըս դիւրութեան ·
Եւ 'ի վերայ ամենայնի՝ մեօք կերակրիմք որպէս հատիւ ·
Ի միմեանց ևըս ծախիմք որպէս գիտէք և տեսանէք :
Արդ եթէ այսքանեօք մեղօք զորըս թուեցաքըդ վերադոյնդ
Զըրկեցայք դուք 'ի կենաց և յընտանի բնակութենէ,
Մեզ զի՞ էք մեղադիր որ չզըրկեցաք զօք 'ի տեղւոյ,
Ոչ անցաք ըզսահմանաւ զոր աւանդեաց մեզ արարիչն ·
Զըրկումըն մեր 'ի ձէնջ, և դուք ըզմէնջ ամբաստանէք ·
Իրաւամբք դատեցարուք ըստ հրամանի ըստեղծողին :

Արտադրութիւն երկոցունց բանից և շարադրութիւն խոստովանել վարդապետին :

ՃՇՄԱՐՏԻ զայս խօսեցաւ ըստ պատահմանցըն հանդիպման,
Ըզբացատրեալ հոյլըս բանից իմաստաբար բարբառելով :
Որով յաղթեալ մեզ իմաստնոցս և կարծեցեալ բանաստեղծացս,
Լըռութեամբ յանդիմանեալ, ոչ կարօտեալ երկար բանից :

1 Ցօրին · օրինակօք :